



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

27.03.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2020/32

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Մեգիէլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի
«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Դ. Մինասյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական պարագաների
ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ քննության առնելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից
28.02.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը պարտավորեցնել չկայացած համարելու ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7 ծածկագրով հրավերի 5-7-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 19-րդ, 21-26-րդ չափաբաժինների գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 28.02.2020թ.-ին:

28.02.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2020/32 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

05.03.2020թ.-ին և 27.03.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 05.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.03.2020թ.-ին:

2. «Մեզիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մեզիէլ» ՍՊԸ-ն 28.02.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1 «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7 ծածկագրով գնման ընթացակարգ:

1.2 Մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետը եւ հայտերի բացման օր է սահմանված 28.02.2020թ, ժամը՝ 14:00:

1.3 «Մեզիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու Ընկերություն) ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով ուսումնասիրելով հրավերը տեխնիկական բնութագրերում արձանագրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների անհամապատասխանություն:

1.4 Ըստ Ընկերության «Գնումների մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման պահանջին չեն համապատասխանում վիճարկվող ընթացակարգի 5-7, 14, 15, 17, 19, 21-26 չափաբաժինները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի «գնումների եւ գնումների գործընթացի տնօրենում, արդյունավետ եւ օգտավետ իրականացումը:»

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «Գնումների գործընթացը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում եւ նրանց միջեւ մրցակցության խրախուսում

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

Գնման առարկայի բնութագրերը ներկայացնելու պահանջները սահմանված են Օրենքի 13-րդ հոդվածով: Վիճարկվող հրավերի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում այդ նորմի պահանջներին:

Վիճարկվող ընթացակարգի 5-7, 14, 15, 17, 19, 21-26 չափաբաժիններով պահանջվող բժշկական պարագաների տեխնիկական բնութագրերի նկարագրի ձեւակերպումները եւ այդ պարագաների տեսակները ներկայացված են այնպես որոնք տարրնկալման եւ մասնակցության սահմանափակում են առաջացնում:

1. 5 չափաբաժով պատվիրատուն պահանջում է ախտորոշիչ կաթետերներ հավաքածու եւ հավաքածուն պետք է կազմված լինի երկու ախտորոշիչ կաթետերներից եւ կաթետերի ներքին լուսանցքը պետք է լինի 4F; 5F; 5.2 F; 6F չափերի: Ըստ էության պատվիրատուին անհրաժեշտ է, որ հավաքածուն լինի երկու կաթետրից, բայց ներկայացնում է չորս չափ, ինչի պարագայում ապակողմնորոշում կարող է առաջացնել մասնակցի մոտ: Եթե մասնակիցը կարող է հայտ ներկայացնել օրինակ չորս չափերը երկուսով, սակայն պատվիրատուն մի չափաբաժնի տակ ներկայացրել է չորս չափ, ուստի մասնակիցը չի կարող հայտ ներկայացնել: Ինչպես նաև տեխ. բնութագրում նշված է ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 5.2 F; 6F և Չափսերն են՝ 4F, 5F,5,2F, 6F որը չի կարող նույնը լինել:

> 6-7 չափաբաժնով պատվիրատուն պահանջում է ախտորոշիչ կաթետերներ եւ նկարագրում, որ կաթետերի ներքին լուսանցք չափը 4F; 5F; 5.2 F; 6F, սակայն նշված 4F; 5F; 5.2 F; 6F չեն կարող ունենալ նույն չափ ներքին լուսանք քանի որ նված չափերի ներքին լուսանցքները համապատասխանաբար հավասար են 1.077մմ, 1.19մմ,1.12մմ, 1.30մմ որը վերածելով համապատասխանաբար F միավորով կստանանք 3,23F; 3,57F; 3,36F; 3,9F: Չափաբան իններու] ներկայացված է կաթետերի ծայրի ձեւերը օրինակ JL 3,5; JL.4; JL4,5; JL5; JL6; AL1; AL2; AL3; JR3,5; JR4; JR4 MOD; JR5; JR5 MOD; JR6; AR MOD; AR1 MOD; AR2

MOD; 3DRS; եւ այլն, որոնք իրենցից ներկայացնում են փարբեր ապրանքատեսակներ: Այսինքն, եթե մասնակիցը կարող է մասնակցել ընթացակարգի չափաբաժնով պահանջվող ապրանքատեսակներից միայն մի քանիսով, սակայն մի չափաբաժնի փակ նշված են մեկից ավելի փեսականի, ուստի չհիմնավորված խոչընդոտներ են ստեղծվում մասնակիցների համար: Չհիմնավորված խոչընդոտները բացառելու համար յուրաքանչյուր ձեռն պետք է ներկայացվեր առանձին չափաբաժնով:

> 6-7 չափաբաժինների ձեռնաչափով ներկայացված են 14 (կաթերերներ/գայր կաթերեր) եւ 15 (կաթերերներ/ուղղորդիչ կաթերեր) չափաբաժինները:

> 17 եւ 19 չափաբաժիններով (անդիոպլաստիկայի նյութեր/դեղապատ ստենդ). 17 չափաբաժնով՝ ստենդի պահանջվող չափերն են ըստ փրամագծերի 2,0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ եւ 19 չափաբաժնով պահանջվում է ստենդի երկարությունը 8մմ, 12մմ, 16մմ, 20մմ, 24մմ, 28մմ, 32մմ, 38մմ; փրամագծերը 2,25մմ, 2,5մմ, 2,75մմ, 3,0մմ, 3,5մմ, 4,0մմ: Այս ձեռնաչափով ներկայացված փեխնիկական բնութագրով սահմանափակվում է մասնակիցների մասնակցությունը, եթե մասնակիցը կարող է ընթացակարգին մասնակցել օրինակ մի փեսակ ստենդով, սակայն մի չափաբաժնով պահանջվում են մի քանիսը, ապա արհեստականորեն խոչընդոտ է ստեղծվում մասնակցի համար:

> 21-26 չափաբաժիններով պահանջվում է բալոնային կաթերերներ եւ փեխնիկական բնութագրերը ներկայացված են նույն սկզբունքով, մեկ չափաբաժնով ներկայացված է պահանջվող ապրանքի փարբեր չափերը:

Այսպիսով վերը ներկայացված չափաբաժինների փեխնիկական բնութագրերը ներկայացված են նույն փրամաբանության մեջ: Մեկ չափաբաժնով պահանջվում է բուժպարագա փարբեր չափերի: Պատվիրատուն պետք է յուրաքանչյուր չափը ներկայացնել առանձին չաձաբաժնով, որպեսզի ապահովել հնարավոր մասնակիցների մասնակցությունը եւ բացառվել չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Պատվիրատուի ներկայացրած փեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում օրենքով սահմանված նորմերին եւ հայտատուի համար ստեղծում են ապակողմնորոշող իրավիճակ:

«Կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման 22-րդ կետը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ եւ արտադրողներ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Պատվիրատուն օրենքին անհամապատասխան հրավեր ներկայացնելով սահմանափակում է հնարավոր հայտատու մասնակիցներին մասնակցելու գնման ընթացակարգին:

Իրավական նորմերի խախտմամբ կազմված հրավերը չի կարող ապահովել գնումների այն ընթացակարգը, որը նախատեսել է օրենսդիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքով եւ դրանց իրականացվան համար ընդունված իրավական ակտերով (ՀՀ կառավարության որոշումներ):»:

Ելնելով վերոգրյալից, «Մեգիէլ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը պարտավորեցնել չկայացած համարելու ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7 ծածկագրով հրավերի 5-7-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 19-րդ, 21-26-րդ չափաբաժինների գնման ընթացակարգը:

3. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 28.02.2020թ.-ին թիվ /ԲԲԱ-ԼՕ/2/3053-2020 գրությամբ դիմել է «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 28.02.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 05.03.2020թ.-ին հրավիրված նիստին՝ ներկայացնելով նաև գրավոր դիրքորոշում:

Պատվիրատուն 09.03.2020թ.-ի թիվ 391 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Նշենք, որ <<Մեգիէլ>> ՍՊԸ-ն մշտապես բողոքարկում է մեր կողմից հայտարարված գնման ընթացակարգերը, սակայն ոչ մի անգամ հայտ չի ներկայացրել: Տպավորություն է ստեղծվում, որ <<Մեգիէլ>> ՍՊԸ-ն չարաշահելով իրեն վերապահված իրավունքները՝ արհեստականորեն խոչնդդում է ԲԿ-ի բնականոն աշխատանքին:

Հարկ եմ համարում նշել, որ տեխնիկական բնութագրերը կազմելիս հաշվի են առնվել <<Մեգիէլ>> ՍՊԸ-ի կողմից նախկինում պաշտոնապես մեզ ուղարկված բնութագրերը, որոնք կազմված են եղել նույն սկզբունքով:/Կցվում է դիրքորոշմանը/

Առանձնացնենք, օրինակ 17-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագիրը լիարժեք համապատասխանում է նաև «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից մեզ ուղարկված Resolute դեղապատ սրտենտին:

Ընթացակարգի 5-7,14,15,19,21-26 չափաբաժիններով պահանջվող բժշկական պարագաների տեխնիկական բնութագրերը չեն հակասում ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 22-րդ կետով սահմանված պահանջներին և չի սահմանափակում մեկից ավելի հնարավոր մասնակիցների մասնակցությունը, այն է 5-7-րդ չափաբաժիններով նախատեսված «ներքին» լուսանցքի փոխարեն պետք է լիներ «արտաքին» լուսանցք, որը վրիպակ է և պարզաբանման միջոցով կարելի էր լուծել նշված խնդիրը: Ինչ վերաբերում է չափերին, հնարավոր չէ նախապես կանխորոշել կաթետերների չափերը և ձևերը, քանի որ այն կախված է հիվանդների անատոմիական առանձնահատկություններից:

Բողոքաբերը նույն տրամաբանությամբ կարող է պահանջել, որպեսզի նշված չափաբաժնով պահանջվող քանակը բաժանվի իրեն հարմար չափաբաժինների, օրինակ՝ 600 հատը ներկայացվեր 2 առանձին չափաբաժիններով՝ 300-ական, որպեսզի չխոչնդուվի իր մասնակցությունը տվյալ ընթացակարգին:

17-19 չափաբաժինների մասով՝

• յուրաքանչյուր սրտենտի համար կա մոտ 48 չափ, այսինքն եթե մենք ուզենանք հայտարարել 4 տեսակի սրտենտ, պետք է 164 չափաբաժին մրցույթ հայտարարենք, որն ավելի շատ է սահմանափակում հնարավոր մասնակիցների մասնակցությունը, քանի որ այս դեպքում ավելի մեծ է հավանականությունը, որ մասնակիցը հնարավոր է տվյալ պահին չկարողանա ապահովել անհրաժեշտ չափաբաժինների անհրաժեշտ քանակությունները, օրինակ՝ առանձին չափաբաժնով ներկայացվեր 2,75*12մմ սրտենտ-20 հատ: Մատակարարն իր մոտ ունենալով ավելի քիչ քանակ, քան նախատեսված էր հայտով, հնարավոր է չմասնակցի մրցույթին: Այն ինչ տվյալ քանակի ապրանքը օգտագործվում է մաս-մաս մեկ տարվա ընթացքում, որը մատակարարին հնարավորություն է ստեղծում հետագայում համալրելու պահանջվող քանակը, եթե բոլոր չափերը ներկայացված են մեկ չափաբաժնով

• աշխատանքների կազմակերպումը հնարավոր է միայն, եթե առակա են անխտիր բոլոր չափերը, քանի որ տվյալ պահին կարող է կարիք առաջանա այն չափի սրտենտի տեղադրման, որը բացակայում է, ինչը հնարավոր է հանգեցնի անդառնալի հետևանքների

• հնարավոր չէ նախապես կանխորոշել սրտենտերի չափերը, քանի որ այն կախված է հիվանդների անատոմիական առանձնահատկություններից:

Վերը ներկայացված դիրքորոշումը տարածելի է մնացած չափաբաժինների համար: Եվ վերջապես դա պատվիրատուի իրավունքն է բնութագրել իրեն անհրաժեշտ ապրանքները, ելնելով իր անհատական կարիքներից:»:

4. ԳԲԲԱ-LO-2020/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 21.02.2020թ.-ին հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով՝

- 5-րդ չափաբաժնի՝ Ախտորոշիչ կաթետերների հավաքածու համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Հավաքածուն կազմված է երկու ախտորոշիչ կաթետերներից՝ չվնասող, ռենտգենկոնտրաստ դիստալ ծայրով, կաթետերի ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 5.2 F; 6F մաքսիմալ ճնշումը ոչ պակաս 8273 կիլոպասկալից: Արյան ծավալային հոսքի արագությունն է՝ նվազագույնը՝ 16,7 մլ/վ - 4F; 21,3մլ/վ և ավել- 5F; 21 մլ/վ և ավել - 5,2F, 35 մլ/վ և ավել- 6F կաթետերի համար: Չափսերն են՝ 4F, 5F,5,2F, 6F, Կաթետերների ծայրը JR4, JL4, 3DRC, JL3.5: Նյութը նեյլոն, ունի մետաղյա հյուսապատում, որը օժտում է կաթետերին ամրությամբ և ունի ատրավմատիկ ռենտգենկոնտրաստ ծայր: CE կամ FDA որակի սերտիֆիկատի առկայություն:

- 6-րդ չափաբաժնի՝ Ախտորոշիչ կաթետերների համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Կաթետերի նյութը նեյլոն/պոլիուրետան , ունի մետաղյա հյուսապատում, որը օժտում է կաթետերին ամրությամբ և ռենտգենկոնտրաստությամբ: Ունի չվնասող, ռենտգենկոնտրաստ դիստալ ծայր, կաթետերի ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 5.2 F; 6F մաքսիմալ ճնշումը ոչ պակաս 8273 կիլոպասկալից: Արյան ծավալային հոսքի արագությունն է ոչ պակաս՝16,7 մլ/վ - 4F; 21,3 մլ/վ և ավել- 5F; 35 մլ/վ և ավել- 6F. կաթետերի համար: Կաթետերի ծայրի ձևերը՝ JL 3,5; JL4; JL4,5; JL5; JL6; AL1; AL2; AL3; JR3,5; JR4; JR4 MOD; JR5; JR5 MOD; JR6; AR MOD; AR1 MOD; AR2 MOD; 3DRS; SRC; MPA1; MPA1; MPB2; LCB;

RCB; IM; PIG; PIG145; PIG155; NIH;UNIV; STR; C1; C2; C3;; Shepherd H3; HN3;RCB; LCB /կաթետերի ծայրի ձևի համար կիրառելի է կամ համարժեք հասկացությունը/ Կաթետերի երկարությունը (նշված չափերից +-5%)՝ 65 սմ; 80սմ; 100սմ; 125սմ: Կաթետերի դիստալ սեգմենտի բազմաձևվությունը ապահովվում է անոթի ընտրողական կաթետերիզացիա: նյութը ապահովում է կաթետերի ճկունությունը՝ համապատասխան անոթի: CE կամ FDA որակի սերտիֆիկատի առկայություն: Պետք է լինի նոր, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ:

- 7-րդ չափաբաժնի՝ Ախտորոշիչ կաթետերների համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Ախտորոշիչ կաթետեր ինվազիվ պրոցեդուրաների համար: Կախված վիրահատվող հիվանդի քաշից և վիրահատվող անոթից ախտորոշիչ կաթետերի պահանջվող չափերն են՝ 5Fr, 6Fr (5Fr, 6Fr- ոչ պակաս 37մ/վրկ անցունակությամբ): կաթետերների միջոցով հնարավոր է միաժամանակ առանց կաթետեր փոխելու կատարել աջ և ձախ կորոնար անոթների անգիոգրաֆիա: Կախված վիրահատվող անոթի առանձնահատկություններից ախտորոշիչ կաթետերի պահանջվող տեսակներն են՝ Tiger I, Tiger II-3.5, Tiger II-4.0, Tiger II-4.5, Tiger II-5.0, BLK-4.0 կամ համարժեք: CE սերտիֆիկատի առկայությունը պարտադիր

- 14-րդ չափաբաժնի՝ Կաթետերներ/Գայդ կատետերների համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Արտաքին շերտը նեյլոնից է, միջին շերտը՝ երկշերտ կամ եռաշերտ հյուսապատված պողպատ և ներքին շերտը PTFE(պոլիտետրաֆտորէտիլեն), ռենտգենկոնտրաստ դիստալ ծայրով, որի երկարությունն է 2,3-2,5մմ կամ 14-16մմ: Բազմահատվածային կառուցվածք, տարբեր հատվածների ջերմաձուլում (փափուկ ծայրի, ձևավորող մասի, հիմնական մարմնի): Ծայրը փափուկ է, ճկուն և չվնասող (ատրավմատիկ): Հյուսապատման “հիբրիդ տեխնոլոգիան ավելացնում է կաթետերի ներքին լուսանցը և աջակցում է մանիպուլյացիայի պրոցեսին: Կաթետերի պատի մետաղապատումը ցանցով խոչնդոտում է գործիքի ծալմանը անոթների անատրոմիական ծալքերի տեղում: Կաթետերները ունեն հավասարաչափ ներքին լուսանցք ամբողջ երկայնքով: Ներքին լուսանցքի չափերն են՝ 9F – 0.098”, 8F-0.088”, 7F-0.078”, 6F-0.070: Երկարությունն է՝ 55սմ, 90սմ-100սմ, 125սմ: Կաթետերի ծայրի ձևերը՝ JL3; JL3 SH; JL3,5; JL3,5 SH; JL3,5 ST;JL3,5 ST SH; JL4; JL4 ST; JL4 SH; JL4 ST SH; JL4,5; JL4,5 ST;JL4,5 SH; JL5; JL5 ST; JL5 SH; JL5 ST SH; JL6; JL3,5 MOD ST; JL4 MOD ST; JCL3,5; JCL 3,5 SH; JCL4; JCL4 SH; JCL4,5; JCL4,5 SH; JCL5 SH; XB3; XB3 SH; XB3,5; XB3,5 SH; XBLAD 3,5; XB4; XB4SH; XB LAD4; XB4,5; XB4,5 SH; XB LAD 4,5; AL.75; AL1; AL1ST; AL1 ST SH; AL1SH; AL 1,5; AL 1,5 ST;

AL1,5 SH; AL 1,5 ST SH; AL2; AL2 ST; AL2 SH; AL2 ST SH; AL3; AL3 ST; AL3 SH; JR3,5; JR 3,5 ST; JR 3,5 SH; JR 3,5 ST SH; JR 4; JR4 ST; JR4 SH; JR4 ST SH; ; SPB 3,5, SPB 3,0, PB 3,5, JR 4,5 ST; JR 4,5 ST SH; JR5; JR5 ST; JR5 SH; JR 6; JR6 SH; JCR 3,5; JCR 3,5 SH; JCR 4; JCR 4 SH; SCR3,5; SCR4; XBR1; XBR2; XBR CA; 3 DRC; AR1; AR1 SH; AR2; AR2 SH; ALR1,2; ALR 1,2 SH; NR4; JFL; JFL ST; JFL LT; JFR; JFR ST; RB; SON1; CAS1; CAS2; MPA1; MPA 1 SH; MPB1; MPB1 SH; H- STICK; H-STICK SH; LCB; LCB SH; RCB; RCB SH Պետք է լինի նոր, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառի տեխնիկական ցուցանիշները, օգտագործման կանոնները գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է պիտանելիության ժամկետի առնվազն 40%-ը: Եթե առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին, մոդելին կամ արտադրողին կիրառական է <<կամ համարժեք>> արտահայտությունը

- 15-րդ չափաբաժնի՝ Կաթետերներ/Ուղղորդիչ կատետեր համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Կախված վիրահատվող անոթի անատոմիական առանձնահատկություններից կաթետերի առկա երկարությունները պետք է լինեն '95- 100 կամ 125 սմ, կաթետրի չափերը՝ 5F, 6F, 7F ներքին տրամագիծը՝ ոչ ավել 0,070"-6F կաթետրների համար: Կցորդչի նյութը՝ պոլիկարբոնատ: Կցորդչի կոնֆի•ուրացիան՝ թևեր: Առավելա•ույն ճնշման չափը՝ 1200psi: Թողունակությունը՝ 4F չափի, 0,042" տրամա•ծով, 100սմ երկարության կաթետրների համար՝ ոչ պակաս 17մլ/վրկ: U 1, U 2, U 4-T40, U 4-T45, U 3, U 1, U 2, U 3, U 4-T40, U 4-T45, MIV RAD PIG LT, MIV RAD PIG LT, MIV RAD PIG LT, MIV RAD PIG LT, MIV RAD PIG ST, MIV RAD PIG ST, MIV RAD PIG ST, MIV RAD PIG ST, MIV RAD PIG ST, U 1, U 2, U 4-T40, U 4-T45, , U 1, U 2, , U 4-T40, U 4-T45, U 1, U 2, U 4-T40, U 4-T45, U 3, CORONARY SINUS, U 1, U 1, MIV RAD PIG LT, MIV RAD PIG LT, MIV RAD PIG LT, MIV RAD PIG LT, MIV RAD PIG ST, MIV RAD PIG ST, MIV RAD PIG ST, MIV RAD PIG ST, U 1, U 2, U 4-T45, U 3, U 1, U 2, U 3, U 4-T40, U 4-T45, U 1, U 2, U 4-T40, U 4-T45, U 3, MIV RAD PIG LT, MIV RAD PIG LT, MIV RAD PIG LT, MIV RAD PIG ST, MIV RAD PIG ST, MIV RAD PIG ST, MIV RAD PIG ST, MIV RAD PIG ST, MIV RAD PIG ST, RBR BT, JL 3.5 cm, JL 4.0 cm, JL 5.0 cm, JL 6.0 cm, JL 3.5 cm, JL 4.0 cm, JL 5.0 cm, JL 6.0 cm, JL 3.5 cm SHORT TIP, JL 4.0 cm SHORT TIP, JL 5.0 cm SHORT TIP, JL 6.0 cm SHORT TIP,

JL 4.5 cm, MODIFIED JR 3.5 cm, MODIFIED JR 4.0 cm, MODIFIED JR 5.0 cm, MODIFIED JR 6.0 cm, JR 3.5 cm, JR 4.0 cm, JR 5.0 cm, JR 6.0 cm, JR 3.5 cm, JR 4.0 cm, JR 5.0 cm, JR 6.0 cm, JR 4.5 cm, JR 3.5 cm SHORT TIP, JR 4.0 cm SHORT TIP, JR 5.0 cm SHORT TIP, JR 6.0 cm SHORT TIP, AR MODIFIED, AL 1, AL 2, AL 3, AL 4, AR 1, AR 2, AR 3, CARDIAC PIGTAIL, CARDIAC PIGTAIL 145 DEGREE, CARDIAC PIGTAIL 155 DEGREE, CARDIAC PIGTAIL, CARDIAC PIGTAIL 145 DEGREE, CARDIAC PIGTAIL 155 DEGREE, LCB, RCB, IM, PRC, PRC, MP A2, MP A2, MP B2, MP B2, MP A2, MP B2, MP A1, MP A1, MP A1, MP B1, MP B1, MP B1, SONES TYPE, JL 3.5 cm, JL 4.0 cm, JL 5.0 cm, JL 6.0 cm, JL 3.5 cm, JL 4.0 cm, JL 5.0 cm, JL 6.0 cm, JL 4.5 cm, JL 2.0 cm BT, JL 2.5 cm BT, JL 3.0 cm BT, JR 3.5 cm, JR 4.0 cm, JR 5.0 cm, JR 6.0 cm, JR 3.5 cm, JR 4.0 cm, JR 5.0 cm, JR 6.0 cm, JR 4.5 cm, JR 3.5 cm SHORT TIP, JR 4.0 cm SHORT TIP, JR 5.0 cm SHORT TIP, JR 6.0 cm SHORT TIP, JR 2.0 cm BT, JR 2.5 cm BT, JR 3.0 cm BT, AR MODIFIED, AL 1, AL 2, AL 3, AL 4, AR 1, AR 3, CARDIAC PIGTAIL, CARDIAC PIGTAIL 145 DEGREE, CARDIAC PIGTAIL 155 DEGREE, CARDIAC PIGTAIL, CARDIAC PIGTAIL 145 DEGREE, CARDIAC PIGTAIL 155 DEGREE, SONES TYPE, SONES TYPE, IM, PRC, MP A1, MP A2, MP B1, MP B2, MP A2, MP B2, LCB, RCB, LCB, UHF CARDIAC PIGTAIL, UHF CARDIAC PIGTAIL 145 DEGREE, UHF CARDIAC PIGTAIL 155 DEGREE, UHF CARDIAC PIGTAIL, UHF CARDIAC PIGTAIL 145 DEGREE, UHF CARDIAC PIGTAIL 155 DEGREE, PRC HF, JL 3.5 cm HF, JL 4.0 cm HF, JL 5.0 cm HF, JL 6.0 cm HF, PRC HF, JL 3.5 cm HF, JL 4.0 cm HF, JL 5.0 cm HF, JL 6.0 cm HF, UHF CARDIAC PIGTAIL, UHF CARDIAC PIGTAIL 145 DEGREE, UHF CARDIAC PIGTAIL 155 DEGREE, JL 3.5 cm BT, JL 4.0 cm BT, JL 5.0 cm BT, JL 6.0 cm BT, JL 1.5 cm BT, JL 2.0 cm BT, JL 2.5 cm BT, JL 3.0 cm BT, JR 3.5 cm BT, JR 4.0 cm BT, JR 5.0 cm BT, JR 6.0 cm BT, JR 4.5 cm BT, JR 1.5 cm BT, JR 2.0 cm BT, JR 2.5 cm BT, JR 3.0 cm BT, AR 1 BT, AR 2 BT, AR 3 BT, AR MOD BT, AL 1 BT, AL 2 BT, AL 3 BT, AL 4 BT, AL 2, CARDIAC PIG STR, CARDIAC PIG 145 DEGREE, CARDIAC PIG 155 DEGREE, CARDIAC PIG STR, SONES BT, SONES BT, IM BT, PRC BT, MP A1 BT, MP A2 BT, MP A2 BT, MP B2 BT, MP B1 BT, MP B2 BT, LT CORONARY BYPASS BT, RT CORONARY BYPASS BT

- 17-րդ չափաբաժնի՝ անգիոպլաստիկայի նյութեր/դեղապատ ստենտ/ համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Ստենտի նյութը լազերով կտրված կոբալտ-քրոմի համաձուլվացք, ստենտի ծածկը - լինուս խմբի դեղանյութ արտազատող ծածկ, որը պետք է ամբողջությամբ արտազատվի ոչ ավել 181 օրից: Ստենտի պատերի հաստությունը - ոչ ավել քան 0.082մմ Ստենտի երկայնաձիգ ճկունությունը պետք է լինի գերազանց: Ստենտը պետք է լինի ոչ ֆեռոմագնիսական և ունենա բարձր ճառագայթային ուժ: Անցման պրոֆիլը՝ ոչ

ավել 0.043"-ից: Կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի չափից՝ ստենտը ըստ երկարության, պետք է ունենա 5 և ավել տարբեր չափեր 2,0; 2,25 տրամագծի համար և 8 և ավել չափ մնացած տրամագծերի դեպքում: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK և FDA որակի վկայականների առկայությունը պարտադիր է: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար պարտադիր է արտադրող կազմակերպության կողմից մատակարարին տրված ծագման սերտիֆիկատի առկայությունը: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառի տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով:

- 19-րդ չափաբաժնի՝ անգիոպլաստիկայի նյութեր/դեղապատ ստենտ/ համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Դեղածածկույթը լինուս ընտանիքի: Ստենտի բաղադրությունը քրոմի և պլատինի խարնուրդ որը ունի բարձր ռենտգենկոնտրաստանտելիություն , ինչի շնորհիվ ապահովվում է ստենտի դիրքավորման տեսանելիությունը անոթում ռենտգեն ճառագայթները ներքո: Մուտքի տրամագիծը՝ ոչ ավել 0.46 մմ, փակված վիճակում ստենտի տրամագիծը 0.040 in. : Դիստալ հատվածը հիդրոֆիլ ծածկույթ է: Նոմինալ ճնշումը ոչ պակաս քան 10 atm , պայթման ճնշումը 16-ից ոչ պակաս: Մատակարարման համակարգի աշխատաքային երկարությունը ոչ պակաս 144 սմ Exchange (RX): Ստենտի երկարությունը՝ 8մմ, 12մմ, 16մմ, 20մմ, 24մմ, 28մմ, 32մմ, 38մմ; տրամագծերը՝ 2,25մմ, 2,5մմ, 2,75մմ, 3,0մմ, 3,5մմ, 4,0մմ: Միջազգային CE որակի սերտիֆիկատ

- 21-րդ չափաբաժնի՝ բալոնային կաթետերներների համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Բալոնային կաթետր (RX), 0,014", կաթետրի երկարությունը՝ 145 սմ: Բալոնի նյութը՝ Պեբակս: Արտաքին հատվածում կրկնակի հիդրոֆիլային ծածկույթ և հիդրոֆոբային ծածկույթ՝ կաթետրի հատվածում: Բալոնի կրկնակի շերտի հաստությունը՝ ոչ ավել քան 0,0014" (0.036 մմ) 2,25-5,0մմ չափսերի համար: Բալոնի նոմինալ բացման ճնշումը՝ 8 մթն, պայթման առավելագույն ճնշումը՝ 14 մթն, ծայրի պրոֆիլը՝ 0,017" (0.43), ծայրի երկարությունը՝ ոչ ավել 3մմ, շաֆթի պրոքսիմալ/դիստալ մասի տրամագիծը՝ 2,1/2,4F: Շաֆթի մեջ ինտեգրված վոլֆրամային ռենտգեն-կոնտրաստ նշանակիրներ 1,0 մմ երկարությամբ: Տրամագիծը-1.2, 1.5, 2.0, 2.25, 2.5,2.75, 3.0, 3.25, 3.5, 3.75, 4.0, 4.5, 5.0 մմ, երկարությունը - 6, 8, 12, 15, 20, 25, 30 մմ: Հանձնելու պահին մնացորդային

պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Ապրանքը պետք է լինի նոր չօգտատրծված գործարանային փաթեթավորմամբ:

- 22-րդ չափաբաժնի՝ բալոնային կաթետերների բարձր ճնշման համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Բալոնային կաթետր (NC), 0,014”, կաթետրի երկարությունը՝ 143 սմ: Բալոնի նյութը՝ Պեբակս: Կրկնակի հիդրոֆիլային ծածկույթ: Բալոնի կրկնակի շերտ՝ 3,5-5,0մմ չափսերի համար: Բալոնի նոմինալ բացման ճնշումը՝ 12 մթն, պայթման առավելագույն ճնշումը՝ 18 մթն, ծայրի պրոֆիլը՝ 0,018” (0.45), ծայրի երկարությունը՝ ոչ ավել 3,74 մմ, շաֆթի պրոքսիմալ/դիստալ մասի տրամագիծը՝ 2,2/2,5F: Շաֆթի մեջ ինտեգրված վոլֆրամային ռենտգեն-կոնտրաստ նշանակիրներ 1,1 մմ երկարությամբ: Տրամագիծը-1.5, 2.0, 2.25, 2.5,2.75, 3.0, 3.25, 3.5, 3.75, 4.0, 4.5, 5.0 մմ, երկարությունը - 6, 8, 12, 15, 20, 25 մմ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Ապրանքը պետք է լինի նոր չօգտատրծված գործարանային փաթեթավորմամբ:

- 23-րդ չափաբաժնի՝ բալոնային կաթետերների համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Սրտանոթային բալոն-կաթետերներ ընդլայնվող գնդանոթներով: Կատթերի երկարությունը՝ ոչ ավել քան 145սմ: Մուտքի ծայրի տրամագիծը՝ ոչ ավել քան 0.43մմ: Ծածկույթը՝ հիդրոֆիլ: Բալոնները ոչ ավել քան եռաթև : Աշխատանքային մաքսիմալ ճնշումը մինչև 3.0մմ տրամագծի դեպքում ոչ պակաս քան 14 Ատմ., իսկ 3.5մմ -ից ավել տրամագծի դեպքում ոչ պակաս քան 12 Ատմ.: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի առանձնահատկություններից՝ ըստ պահանջվող տրամագծի՝ 1.25-4.0 մմ տիրույթի միջակայքում համաձայն սրտանոթային բալոն-կաթետերի տիպի ըստ պահանջվող երկարությունների՝ 10-40մմ տիրույթի միջակայքում համաձայն սրտանոթային բալոն-կաթետերի տիպի: Միջազգային ISO13485, CE MARK որակի վկայականների առկայություն, ինչպես նաև գրանցված լինի ՀՀ-ում Սրտանոթային բալոն-կաթետերը պետք է լինի նոր չօգտատրծված գործարանային փաթեթավորմամբ: Հանձման պահին ամբողջ

պիտանելիության ժամկետի 50%-ի առկայություն: Պատվիրատուի կողմից նշված վերջնական օգտագործողը իրավունք ունի վերադարձնել կամ փոխել ստացված չափը այլ չափսով՝ ըստ անհրաժեշտության, միայն մինչև մատակարարված ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի նվազագույնը 30%-ի առկայության դեպքում: Հակառակ դեպքում մատակարարն իրավունք ունի պահանջել վճարել մատակարարված ապրանքի համար:

- 24-րդ չափաբաժնի՝ բալոնային կաթետերների բարձր ճնշման համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Բալոն չընդլայնվող գնդանոթով, կատետերի երկարությունը 143-145սմ, հիդրոֆիլիկ ծածկույթով, X քրթինգ ծածկույթով աշխատանքային հատվածում, նոմինալ ճնշումը 1216ԿՊա-1225, Մաքսիմալ ճնշումը 2229ԿՊա-ից ոչ պակաս 2.0-ից 4.0մմ տրամագծով բալոնների համար, 2026ԿՊա-ից ոչ պակաս 4.5մմ-ից 5.0մմ տրամագծով բալոնների համար, բալոնները եռաթև են: Մուտքի ծայրի տրամագիծը 0.43մմ:

- Կախված վիրահատվող անոթի տրամագծի չափից կաթետերի պահանջվող չափերն են ըստ տրամագծի՝ 2.0; 2.25; 2.5; 2.75; 3.0; 3.25; 3.5; 3.75; 4.0; 4.5; 5.0 մմ:

- Կախված անոթի վնասված մասի չափերից կաթետերի պահանջվող չափերն են ըստ երկարության 6մմ; 8.0; 12մմ; 15մմ; 20մմ; 25մմ; 30մմ:

- 25-րդ չափաբաժնի՝ բալոնային կաթետերների համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Ընդլայնվող գնդանոթով բալոն ,կատետերի երկարությունը 142սմ, Platinum Iridium, փակված վիճակում 1.25-1.5-ի համար 0.022", մնացած չափսերի համար 0.24" պրոքսիմալ հատվածում 1.98FR չափ, Դիստալ հատվածում 2.4-2.7, Նոմինալ ×նշումը 7մթն , մաքսիմալը 14-16 մթն. կախված չափերից բալոն նախատեսված դիլատացիայի համար:

- չափսերը՝ տրամագիծ՝ 1.25,1.5,2.0,2.25,2.5,2.75,3.0,3.5,4.0,4.5մմ:

- Երկարություն՝ 6,9,12,14,15,17,20,25,30,33,38,41մմ:

- Ֆորմատ- հատ, Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը:

- 26-րդ չափաբաժնի՝ բալոնային կաթետերներ համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Դիստալ հատվածում 2.4-2.7, Նոմինալ ×նշումը 7-15մթն , մաքսիմալը 18-22 մթն. կախված չափերից բալոն նախատեսված դիլատացիայի համար:

- չափսերը՝ տրամագիծ՝ 2.0, 2.25,2.5,2.75,3.0, 3.5, 4.0մմ:

- Երկարություն՝ 8,13,18,23,մմ:

- Ֆորմատ- հատ, Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը:

www.armeps.am կայքում առկա տվյալների համաձայն՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարզանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով, բացառությամբ 7-րդ և 15-րդ չափաբաժիններից, մնացած վիճարկվող չափաբաժիններով յուրաքանչյուրով հայտ են ներկայացրել մեկական մասնակիցներ:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 28.02.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության

որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառույթային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Վերոգրյալ իրավանորմների համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարզանքների ձեռքբերման նպատակով 21.02.2020թ.-ին հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ նկարագրում են ձեռքբերվող ծառայության հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Պատվիրատուն նման բնութագրեր սահմանելով ապահովել է մրցակցության հավասար պայմաններ՝ հնարավոր մասնակիցների համար, որի արդյունքում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ գնումների գործընթացում չի առաջացվել: Բացի այդ նման բնութագրերը օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք:

Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ Պատվիրատուի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտած լինելու փաստը, այն, որ սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները խոչընդոտում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Ինչ վերաբերում է Ընթացակարգին մասնակցելու նպատակով վիճարկվող չափաբաժինների մասով յուրաքանչյուրով մեկական հայտ ներկայացրած միայն 1 (մեկ) մասնակից լինելու հանգամանքին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ միայն մեկ մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքը չի կարող գնահատվել, որպես այնպիսի էական նշանակություն ունեցող փաստ, ըստ որի կարելի կլիներ արձանագրել հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ չապահովելու հանգամանքը, ըստ այդմ էլ՝ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի դրույթների խախտումը: Օրենքի նշված դրույթի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ գնման առարկայի բնութագիրը պետք է ապահովի ոչ թե մեկից ավելի հայտի ներկայացման պարտադիր պայման, այլ պետք է ապահովի հնարավոր մասնակիցների հայտ ներկայացնելու հնարավորություն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները անհիմն են, իսկ Ընթացակարգի պահանջները հիմնավոր են և չեն սահմանափակում հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները: Հատկապես այն դեպքում, երբ Պատվիրատուի կողմից ներկայացված բողոքի առարկություններով հերքվում են Բողոքաբերի կողմից նշված հնարավոր մասնակիցների մրցակցության ոտնահարումը և գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների առկայությունը:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում առկա չէ, ինչը կարող էր հանգեցնել տեխնիկական բնութագրերով սահմանված պայմանների փոփոխմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 28.02.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/32 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝**



ԼԵՎՈՆ ՕՇԱՆՅԱՆ